

ԱՂՈԹՔԻ ՆՄԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

1. Մարդ Ինչո՞ւ Սկսած է Աղօթել
2. Լուսթեան Զայնը--Աղօթք
3. Լուսթեան Զայներ
4. Աղօթել Յիսուսի Անունով
5. Աղօթել՝ Հոգեկան և Ինքնագիտակցական Վերացում է Դէպի Աստուած
6. Աղօթքին Զօրութիւնը

**PRAYER IS THE GREATEST
CENTERFUGAL FORCE**

ԱԼՊԷՌ ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ
ԿԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ
2003

ՄԱՐԴ ԱՐԱՐԱԾ ԻՆՉՈ՞Ւ ՍԿՍԱԾ Է ԱՂՕԹԵԼ

Մարդ էակը հերկած է հողը ցանած է իր սիրած սերմերը, ջրած է հունտերը, կերած է անոնց արդիւնքը ու վայելած անոնց համը: Խնամած է բազմաթիւ թռչուններ հիացած է անոնց գունագեղ թռչտիլը, լսած է անոնց բաղրահնչիւն ձայները, ջանացած է խօսիլ անոնց հետ: Հովուութիւն ըրած է ոչխարներու, այծերու և կովերու: Խմած է անոնց կաթը, կերած է անոնց միսը, սիրած ու փայփայած է անոնց մարմինը, սակայն միշտ փնտրած է Գերմարդկային ներկայութիւն մը որ իր դատարկ հոգին յագեցնայ սակայն ինք մնացած է հոգեպէս ծարաւ և անօթի:

Մարդ կենդանիներէն կը տարբերի իր գիտակցական վարքով, բանական հոգիով, բարոյական սկզբունքով և ինքնիշխանութեամբ: Մարդուն բնորոշ է իր ինքնագիտակցութիւնն ու ստեղծագործական աշխատանքը: Բոլոր կենդանիներուն մէջ մտաւորապէս ամենագարգացածն է մարդը և միայն ան ունի յօդաւոր լեզու: Մարդու հիմնական և ամենաէական գանազանութիւնը բարձրագոյն անասուններէն անոր գազաթնահայեաց դիրքն է, որուն հետեւանքներն են միւս գլխաւոր տարբերութիւնները՝

ա. Ձեռները՝ իբրեւ աշխատելու գործիքներ,

բ. Բերանը՝ իբրեւ խօսարան,

գ. Ջարգացած ուղեղը՝ իբրեւ զգայական և մտաւորական անօթ: Մարդը բոլոր արարածներու թագն ու պսակն է և իրե՛ն շնորհուած է իմանալի հոգի: Մարդ, իբրեւ ֆիզիքական գործարանաւորութիւն և իմացական ու բարոյական կազմաւորութիւն, հրաշալիք մըն է: Մարդ օժտուած է իմացական և զգայական զարգացման անսահման հնարաւորութիւններով:

«Մարդ վար ինկած աստուած մըն է, որ երկինքը կը յիշէ»:

Աստուած Իր հոգւոյն անհունութեամբ կը սիրէ մարդ արարածը: Մարդ առանց Գերբնականին կը պարպուի, անոր յոգնած մարմինը կազդոյր կը փնտռէ, իսկ հոգին՝ Լոյս, որովհետեւ առանց Հոգեղէն Լոյսի ան կ'անջգանայ և կ'իմաստազրկուի: Ամենագօրաւոր ձայնը՝ մանկան մը լալու ձայնն է, երբ ան իր մայրը կը փնտռէ: Մենք գԱստուած կը փնտռե՞նք, աղօթքով: Մարդ իր մտքով՝ սփանչելագործ հանճար ու տիեզերանաւորդ մըն է: Ձենք կրնար հաւատալ թէ, մեր երկրի վրայ գոյութիւնը պատահակա՞ն դիպումի մը արդիւնքն է թէ ճակատագրի մը պատահարը: Մարդ արարածին գործօն մասնակցութիւնը իր գիտակցութեան պատճառաւ չափազանց մտերիմ ու սերտ է անհուն տիեզերքին հետ: Մարդկային սոյն իմացական կարողութիւնը

համայն գոյացութեան մէջ մեզ կը ստիպէ որ մարդ էակը նպատակի մը համար ստեղծուած արարած մըն է, ու ոչ պատահականութեան մէկ կոյր ու ժամանակաւոր արտադրութիւնը: Մարդու անհատական մեկուսացումը Աստուծմէ, կը դառնայ իր բանտը: Մարդ անխուսափելիօրէն յարաբերութիւն ունի առաջին՝ աշխարհի հետ, 2-րդ, բնութեան հետ, 3-րդ, մարդու հետ և 4-րդ, Աստուծոյ: «Մարդը գաղտնիք է: Պէտք է հասկնալ այդ գաղտնիքը և եթէ ամբողջ կեանքը յատկացնես հասկնալու, մի ըսեր թէ ժամանակ կորսնցուցած ես: Ես այդ գաղտնիքով կը զբաղուիմ, որովհետեւ կ'ուզեմ՝ **մարդ ըլլալ**»--**Տոթոյովսի**:

Մտածող, զգացող որոնող հոգին կը հարցնէ. "Ինչո՞ւ կ'ապրիմ, ո՞ւր կ'երթամ, ի՞նչ է կեանքի էութիւնն ու նպատակը": Արուեստն ու գիտութիւնը պատասխան չունին: Զսաներորդ դարը իր արուեստով կ'ընթանայ դէպի մայրամուտը մարդկութեան, դէպի բնաջնջումը քան դարերու քաղաքակրթութեան: Առանց կրօնի և բարոյական կատարելութեան ձգտումին, քաղաքակրթութիւնը, գիտութիւնը և արուեստը կը դառնան եսական ու զգուելի: Գիտութիւնն ու քաղաքակրթութիւնը նոյն իսկ չարիք են առանց բարոյական զօրութեան:

Գիտութիւնը մարդկային յառաջդիմութեան և ճշմարտութեան ի խնդիր փնտռում մըն է: Սակայն գիտութիւնը կը սպառնայ մարդկութեան: Գիտութիւնը չի կրնար որոշել թէ իր ջանքերուն արդիւնք՝ հիւլէական ուժի սկզբունքները ինչպէ՞ս պիտի գործածուին: Գիտութիւնը զէնքեր կրնայ հնարել, սակայն մարդկային կեանքի նուիրականութեան հանդէպ դրական կեցուածք չի կրնար պարտադրել: Գիտութեան յառաջդիմութեամբ մարդկութեան տրուած միջոցներու գործածութեան ձեւը կը պատկանի գիտութեանէ դուրս կալուածի մը-- *արժէքներու, հաստի, համոզումներու*: Բարոյականի գաղափարը, ճիշդ-սխալի, չար-բարիի յղացները, կրօնական և հոգեկան արժէքներու տարրերու կալուածն է: Գիտութիւնը կ'ըսէ թէ ինչպէ՞ս կ'ըլլայ՝ իսկ կրօնքը՝ թէ ի՞նչ պարտի՞ ըլլալ:

Աստուած որոնելու գերագոյն արտայայտութիւնը մարդկային պատմութեան կրօնները եղած են: Նախընտրելի է ճշմարտութիւնը որոնել, քան թէ աստուածաբանական վիճաբանութեան մէջ յաղթանակել և ընկերսիրութիւնը ասելութեան փոխակերպել:

Մարդ արարած, թէպէտ որոնած և փնտրած է զԱստուած՝ իր Արարիչը զանազան կրօններու և գիտական հնարամտութիւններու մէջ, սակայն Աստուած անոնց մէջ չպարփակուիր: Աստուած չոգի է, "Խորհուրդ Խորին": Աստուած Յայտնութիւն է, ու ո՛չ մարդու գիտութեամբ հասանելի կամ գտանելի: Յիսուս՝ Որդին Աստուծոյ մասին ըսաւ.

«Ոչ ոք կը ճանչնայ Որդին, եթէ ոչ՝ Հայրը, և ոչ ոք կը ճանչնայ Հայրը, եթէ ոչ՝ Որդին, և ան՝ որուն ուզէ յայտնել որդին»--Մատթ. ԺԱ.27:

Յիսուս ըսաւ նաեւ Յովհաննու առաքեալի բերնով. «Մենք ամէնքս *Յիսուսի լիութենէն ստացանք՝ շնորհ՝ շնորհի փոխարէն. որովհետեւ Արէնքը Մովսէսի միջոցով, իսկ Շնորհն ու Ճշմարտութիւնը Յիսուս Զրիստոսի միջոցով եղան*»--Յով. Ա.16-17:

Մովսէս ու շին Կտակարանի մարգարէները ցոյց տուին մարդկութեան, թէ կա՛յ Գերբնական տարածք մը, սակայն այդ տարածքին յատկանիշները իրենց ըմբռնումին մէջ շփոթ և պղտոր էին: Մովսէս պատուիրեց Իսրայէլի, թէ Աստուծոյ մօտենալը կենդանիներու զոհագործութեամբ պարտ է ըլլալ: Հազար տարի յետոյ եկաւ Եսայի մարգարէն և ըսաւ. ԿԶ.3.

«Արջառ մորթողը մարդ մեռցնողի պէս է,
Գառնուկ զոհողը ջուն մորթողի պէս,
Նուէր մատուցանողը խոզի արիւն մատուցանողի պէս,
Կնդրուկ ծխողը կուռք պաշտողի պէս,
Իրաւընէ անոնք իրենց ճամբները ընտրեցին,
Ու անոնց հոգիները իրենց գարշելիներէն կ'ախորժին:

***«Բայց ես ասոր պիտի նայիմ, Այսինքն խոնարհին և
կտարած հոգի ու նեցողին ու իմ խօսքէս դողացողին:***

Զրկանք, անօթութիւն ու տառապանք ճաշակած մարդ արարածը իր շուարումներուն մէջ երբ լալահառաջ կը փնտռէ իր Արարաիչը, Հայր Աստուած անպայման կը յայտնէ անոր Իր Հայրական սիրոյ ու ողորմութեան տեսանելի ու ջօջափելի եութիւնը Մարդեղացեալ Յիսուս Զրիստոսի անձնականութեամբ: Իրենց Արարիչը գտնողներն ու ճանչցողները կը վկայեն ու կը հաստատեն ըսելով.

*«Յիսուս էր ճշմարիտ լոյսը որ կը լուսաւորէ ամէն մարդ, որ աշխարհ
պիտի գայ: Ան աշխարհի մէջ էր, և աշխարհը Անով եղաւ, սակայն աշխարհ
չճանչցաւ զԱյն: Իսկ անոնք որ բնորո նեցին զԱյն՝ իջխանութիւն տուաւ
անոնց ըլլալու Աստուծոյ որդիներ, անոնց՝ որոնք կը հաւատան Իր անու նին»*
- -Յով. Ա.9-12:

Մարդ և Աստուած իրարու հետ միացած, միակամ, միասիրտ, միաբան ու միատարր ըլլալու ստեղծուած են: Մարդ արարած մարմին և հոգի, սակայն իրապէս մէկ է ան: Մարդկային մարմինն ու հոգին Աստուծոյ կամֆին արտա-յայտութիւնն է: "Հոգի" բառը կ'ակնարկէ մարդկային կեանքին և անոր ընդ-հանուր անձնաւորութեան: "հոգի" նաեւ կ'ակնարկէ մարդու ներքին սկըզբունքը և համոզումը: "Մարդ" կը նշանակէ ըլլալ բանական, ազատ, ինքնորոշ, և ինքնագիտակից անզուգական հրաշակերտութիւն: Առանց գերբնական ներշնչումի (աղօթքի), մարդ հաւասար է անասուններու: Մարդ կը բալէ դէպի

յաւիտենականութիւն, ոչ որովհետեւ կոթողներ և յուշարձաններ կը թողու աշխարհին, այլ որովհետեւ պարտութեան մէջ անգամ յաղթանակ կը կերտէ և մահկանացութեան մէջ իսկ աստուածութեան կը ձգտի: Մարդ, ակամայ կը մեղանչէ իր մղումներէն տարուած, որովհետեւ ներկայ աշխարհին տէրը Սատանան է:

«Աստուած ա՛յնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր միածին Տղային տուաւ, որպէսզի Անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ: Որովհետեւ Աստուած Իր Տղային աշխարհ դրկեց՝ ո՛չ թէ որպէսզի աշխարհը դատապարտէ, այլ որպէսզի աշխարհը փրկէ»--Յով. 4. 16-17:

Արարչագործութեան փառապատկը եղող մարդ էակ, Աստուծոյ լծակ-ցութեամբ և աղօթելով կրնայ իր կոչումը իրագործել այս աշխարհի վրայ: Աղօթող հաւատացեալը իր աղօթաբառերուն պարզ և դանդաղ խնդրանքովը կը հաճեցնէ զԱստուած: Ու հոգեկան սրբութեամբ կ'առաջնորդուի բարձր ներապրումներու, ինքնամփոփութեան և միսթիֆական կեանքի: Սեւեռեմք մեր հայեացքը աղօթանուէր գգացումով և ո՛չ աճապարնքով: Աստուած կը փափաքի իմանալ մեր ձայնը և այդ ձայնին մէջ զգալ և ըմբոշխնել մեր սերը Իրեն հանդէպ: Եթէ աճապարանօք վերջացնենք մեր աղօթքը, Աստուած պիտի չհասկնայ մեր աղօթքին իմաստն ու նպատակը, և մենք իսկ պիտի չգիտնանք թէ ի՛նչ աղօթեցինք, ինչո՞ւ աղօթեցինք և որո՞ւն աղօթեցինք:

Սուրբ Պատարագի ընթացքին մեր աղօթքի բառերը ա՛յնքան արագ կը կրկնուին, որ թէ՛ պատարագիչը, ունկնդիր աղօթողը և թէ՛ Աստուած բան չեն հասկնար, այլ՝ միայն բառերու անիմաստ հաւաքածոյ մը կը լսուի: Ուստի ըլլանք զգոյշ երբ կ'աղօթենք: Նախ ակնածանքով մօտենանք Աստուծոյ որպէս մեր Արարիչը և Տէրը և յարգենք Անոր սուրբ ներկայութիւնը: Աստուած դասընկեր մը չէ՛, մեզի հետ ֆութպոլ խաղացող մը չէ՛, այլ՝ մեր Տէրը, Որուն օր մը հաշիւ պիտի տանք և պիտի խոստովանինք մեր սխալները: Աղօթողը պարտ է զգալ Աստուծոյ մեծութեան ներկայութիւնը և անճառելի սրբութիւնը:

Պարտ ենք դիմաւորել Ամանորը և Սուրբ Ծնունդը աղօթանուէր գոհաբանութեամբ, ու ո՛չ թէ հարբեցութեամբ ու համագիշերային խրախճանք-ներով: Գերագոյն աղօթքը լուծութեամբ Աստուծոյ առջեւ խոնարհիլ է, երբ մարմինը լուռ է հոգին կ'աղօթէ: Աստուած Ինքզինք կը յայտնէ հոգիով խոնարհներուն և փոքրիկներուն: Յիսուսի Խաչը մեզ կը կանչէ աստուած-գիտութեան Լոյսին: Աստուած ճանաչումը հոգեկան Լոյսին գիտակցութիւնն ու զգացողութիւնն է: Զորս Աւետարաններուն մէջ տասնհինգ անգամ յիշուած է Յիսուսի աղօթք ընելը, անոնցմէ տասնմէկը կը գտնուին Ղուկասի Աւետարանին մէջ: «Աշխարհի վրայ չկայ կրօնք մը, որ աղօթք չունենայ: Աշխարհի վրայ չկայ ջրթունք մը, որ աղօթք արտասանած չըլլայ: Աղօթքի գաղափարը ի ծնէ, կարծե՛ք մեր մէջն է, մեզի հետ ալ կ'աճի և կը զօրանայ:

Քրիստոնեութենէն առաջ եւս կը տեսնենք աղօթքի գաղափարը ժողովուրդներու կեանքին մէջ, թէեւ տարբեր ձեւերով արտայայտուած, բայց չեն դադարիր աղօթք ըլլալէ»--**Խորէն վրդ. Տողրամաճեան:**

Աղօթել և Աստուծոյ հանդիպիլ ճգնածամ մըն է, որովհետեւ Աստուած ուժ է, Զօրութիւն է, Ճշմարտութիւն է, և Սրբութիւն:

1. Միայն Աստուծոյ ողորմութիւնը դիտելու չէ, այլ նաեւ Անոր Սրբութիւնը:

2. Կ'աղօթենք Աստուծոյ միայն բան մը *տեսելո՞ւ*, թէ Զինք մեր մէ՛ջ *հրաշքերու համար*:

3. Մեր կարօտը առ Աստուած է, թէ Իրմէ ստանալիքներն են:

Աղօթքը՝ աստուածային սուրբ գերիշխանութիւնը հաստատել է մեր հոգիին մէջ: Աղօթքը սրբազան վայրկեան մըն է մարդկային կեանքին մէջ երբ ան իր սիրտը կը բերէ որպէս զոհ մը Աստուծոյ: Աղօթելը, անձնատուր ըլլալ է Աստուծոյ կամքին: Քրիստոս աղօթքով սկսաւ Իր առաքելութիւնը (աշխատանքը), աղօթքով շարունակեց և Գեթսեմանիին ու խաչին վրայ աղօթքով վերջացուց Իր վկայութիւնը:

«Սորվեցուր մեզ, ո՛վ Տէր, տեսնել և օգտագործել ծառայութեան ամէն պատեհութիւն: Թո՛ղ ըլլանք տուողներ առանց փոխարժէքը հաշուելու, պայ-
փարողներ՝ առանց վիրաւորելու, աշխատողներ՝ առանց հանգիստ փնտտելու, ծառայողներ՝ առանց վարձատրութիւն ակնկալելու, այն գիտակցութեամբ թէ Զու կամքդ է որ կը կատարենք, ամէն»--**Բարսեղ հայրապետի աղօթքը:**

Երածջտութիւնը՝ աղօթք և պաշտամունք է միանգամայն առ Աստուած:

«Մենք պէտք է գտնենք Աստուած, բայց Ան՝ անգտանելի է աղմուկի մէջ և ժխորի: Աստուած բարեկամ է լուութեան: Տեսէք բնութիւնը--ծառ, խոտ և ծաղիկ--անոնք կ'ածին լուութեան մէջ: Դիտեցէք աստղերը, լուսինը, արեւը. անոնք կը ջարժին լուութեամբ: Ո՛րչափ աւելի կը ստանանք լուռ աղօթքի մէջ, այնքան աւելի մեր գործօն կեանքին մէջ: Լուութեան կարիք ունինք, հոգիները ջօջափելու համար: Կարեւոր չէ այն, ինչ որ մենք կ'ըսենք, այլ ի՛նչ որ Ան մեզի կ'ըսէ և մեր միջոցով կ'ըսէ: Մեր բոլոր բառերը պիտի ըլլան անիմաստ, եթէ չգան մեր ներսէն»--**Մայր Թերէզա:**

Աղօթքը հասնիլ է գերբնական ներկայութեան, որ արդէն հո՛ն է Իր սիրոյ ու ողորմութեամբ: Աղօթքը արտայայտութիւնն է հոգեկան գօրեղ տենչի, սքանչացման, վիշտի, թախիծի, դէպի Մեծ Զօրութեան առաջ, որ աղօթողին համար կենդանի է, կատարեալ և պատրաստ է օգնել: Աղօթքը, գիտութիւն մը կամ արուեստ մը ըլլալէ աւելի, **հաղորդութիւն** մը և **յարաբերութիւն** մըն է Աստուծոյ հետ, այսինքն՝ սրտակցութիւն մը Գրբնականին, ու հասնիլ է Անհաս կարծուածին:

Հասարակ մարդը հաղորդակցութեան իբր միջոց ունի աղօթքը, որ կ'արտաբերուի ձայնով, այսինքն՝ երածջտութեամբ: Այս հիման վրայ, միջնադարեան հին եկեղեցիներուն մէջ ջանացած են տեսողութեան դերը

նսեմացնել լոյսի թափանցումը պակսեցնելով: Հետեւելով Յիսուսի պատ-
ւերին, որ կը յանձնարարէր աղօթելու համար Բաշուիլ ներս, դուռ և
պատուհան գոցելով: Զնշած են նաեւ ամէն տեսակ ներքին զարդ որ կրնայ
ուշադրութիւն գրաւել: Աղօթքը առանձնութեան մէջ դէմ յանդիման
գտնուելով իր Ստեղծիչին, մարդ ինքնագիտակցութեան կու գայ ու կը զոջայ
իր մեղանշումներուն համար: Աղօթքը արտաքին օրէնքի և մեքենայութեան
կերպարանք ստանալու չէ: Աղօթքը կ'արժանաւորուի երբ աղօթողը ի՛ր հո-
գիին ներկայութեամբ և բառերուն իմաստը ըմբռնելով կ'աղօթէ **ապաշխա-
րանքի և զոջումի հոգիով:**

Աղօթքը կեանք է: Կեանքի երգն է: Սիրոյ երգը: Աղօթքը կը ծնանի
հերոսներ, կը կերտէ ազատարարներ և կը դարբնէ նուիրեալներ, կը պարգեւէ
յաւերժացողներ: Զաւակը իր մօրմէ՛ն կը սորվի, թէ ո՞վ է Աստուած, ո՞վ է
Քրիստոս, ի՞նչ է սէրը, ի՞նչ է աղօթքը, ինչպէ՞ս պէտք է ապրիլ կեանքը:
Աղօթքը հոգւոյն հացն է: Աղօթքը վարժութիւն պէտք է դառնայ, զօրաւոր
պահանջք մը, ո՛չ թէ միայն նեղութեան և տագնապի միջոցին, այլ նաեւ փա-
ռաբանութիւն: Աղօթքը նման ձգողականութեան անտեսանելի զօրութիւն
մըն է:

«Ծանիր զԲեզ», նախ և առաջ, զննէ՛ ներքին *իրակաւ* անձ.դ, այնու-
հետեւ միայն կրնաս դառնալ արտաքին իրականութեան, աւելի թափանցող
իմացողութեամբ մը: «Ծանիր զԲե՛զ», դիւրին չէ, ոչ ալ հաճելի: Դուն Բեզ
չես տեսներ այնպէս՝ ինչպէս որ ես, այլ այնպէս՝ ինչպէս որ կ'ուզէիր ըլլալ:
Աղօթքին միջոցով պիտի տեսնես դուն զԲեզ, այնպէս՝ ինչպէս որ ես:

Աննուագ մրմունջներու խորասոյգ ոգեղինութեամբ առլի աղօթք.

ա. Աղօթէ՛ ով հայորդի:

բ. Աղօթէ՛ սրտալի և հոգեթով բառերովը Բու հայրերուդ:

գ. Աղօթէ՛ որպէսզի բացուի՛ս Աստուծոյ և լեցուիս Աստուծմով:

Խօսի՛նք Աստուծոյ հետ, մարդ կեանքին մէջ երբեք խաւարին հետ չի
խօսիր, այլ Լոյսին:

Յունուար 22, 2002

Թորոնթօ

ԼՌՈՒԹԵԱՆ ՁԱՅՆԸ

Աղօթքը ինքնաբուխ և հոգեբույժ վիճակ մը, դիրք մը և հանգամանք մը ըլլալով հանդերձ, պէտք է դառնայ նաեւ խոնարհ կենցաղ մը երբ աղօթողը մօտենայ այն Վեհ և Սուրբ Ներկայութեան՝ Հա՛յր Երկնաւորին, յարաբերելու և խօսակցելու համար Անոր հետ:

Ինչո՞ւ խոնարհ դիրքաւորում:

Յիսուս Քրիստոսի, "Միրոյ Աստուած" Բարոզչութիւնը սխալ հասկցուած է կարգ մը անգէտ և անձնասէր հաւատացեալներու կողմէ: Այս կարծեցեալ հաւատացեալները, *համարձակութիւնը* մտերմութեան հետ կը ջփոթեն: Աստուծոյ հետ մտերմութիւն մը՝ *սրտա՛կցութիւն* կը նշանակէ և ո՛չ համարձակութիւն, որ անգիտութենէ յտաջ կու գայ:

Աղօթողներու դասակարգ մը կայ, որոնք՝ իրենց երկարատեւ աղօթքներով իրենց բարեպաշտութիւնը կը գովաբանեն Աստուծոյ, որպէս տեղեկատրութիւն... (նման Փարիսեցիին):

Կան այլ աղօթողներ ալ, որոնց աղօթքին ամբողջութիւնը կը կայանայ խնդրանքներու հսկայ ցանկէ մը: Այս դասակարգը զԱստուած բարեգործական խնամակալութեան Տրուիչը կը համարեն:

Կան նաեւ վշտահար և ձախորդութեան հանդիպողներ, որոնք մի միայն գանգատ և դժգոհութիւն կը տրտնջան: Այս գանգատողները զԱստուած կը մեղադրեն իրենց սխալներուն և ազահութեան պատճառաւ՝ իրենց կրած կրօնասին և դժբախտութիւններուն:

Աւելի խելացի և ճարպիկ բարեպաշտներ կը կարծեն, թէ Աստուած Առեւտրական մըն է և Իր հետ կը ջանան *սակարկութեան* մտնել: Եթէ Աստուած իրենց պայմանները լրացնէ, իրենք եւս իրենց կարգին այս կամ այն ինչ նուիրատուութիւնը, զոհողութիւնը կամ բարեսիրութիւնը պիտի կատարեն: Այլ կրօնասէրներ եւս կան, որոնք *ջարունակ* կ'աղօթեն: Այնպիսի յանկերգով մը կ'աղերսեն, որ երբեք առիթ չեն տար Աստուծոյ, որ Ա՛ն պատասխանէ իրենց աղօթքին: Այս թշուառ աղօթող հաւատացեալներու գանգատն է, թէ իրենց երկարատեւ ու ողորմագին աղօթքներուն, Աստուած խուլ ականջ կը դնէ, ո՛չ կ'իմանայ իրենց աղօթքը և ոչ ալ կը պատասխանէ...: Վերոյիշեալ յուսախաբ աղօթողներ կ'անգիտանան, որ իրենց անընդհատ խօսելուն պատճառաւ չեն իմացած Աստուծոյ պատասխանը: Աղօթողի՛ն սխալ հանգամանքն է, որ ան չիմանար Աստուծոյ պատասխանը:

Աղօթքը մարդ արարածին բնածին և կենսական մէկ պահանջն է ու անհրաժեշտ կարիքը, այնպէս, ինչպէս շնչառութիւնը: Ծնչառութիւնը, որ նիւթակա՛ն գործունէութիւն մըն է, յաճախ կը կարօտի մասնագիտական վար-

ծուլթեան և միջավայրի:

Նոյնպէս ալ աղօթելը վարժութիւն և գիտութիւն կը պահանջէ ենթակայէն: Բարձրաստիճան անձնաւորութեան մը երբ հանդիպելու ըլլանք, կը հարցնենք մեր մեծաւորներուն, թէ ինչպէ՞ս պէտք է բարեւել, ինչպէ՞ս խօսիլ և ի՞նչ խօսիլ: Խօսակցութեան ընթացքին, երբեմն մեր առաջնորդը աչքի նշանով կը լռեցնէ մեզ շողակրատել, որպէսզի բարձրաստիճան նախարարը՝ ինք ալ արտայայտուի: Ինչո՞ւ: Որովհետեւ մեր հանդիպումին և բուն նպատակը նախարարին կամ իջխանին միտքը հասկնալ է, անո՛ր կամքը գիտնալ է:

Նոյնպէս աղօթքի պահուն--ըլլայ ան եկեղեցիի մէջ, ճամբորդութեան ընթացքին կամ գետնուղիի մէջ, ջանանք լուրթեամբ իմանալ Հոգիին ձայնը: Խորհուրդներու ընդերքէն, **լուրթեան** մէջ, կ'ոգեկոչէ այն Ձայնը որ միայն եթերին թելերուն վրայ կը ճօճէ: Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի յայտնաբանած Աստուածը, ջանթահարիչ որոտումներով և փոթորիկներու գոռումով չի խօսիր մեզի հետ, այլ **լուրթեան** ձայնով: Այն մեղմ ու բնական ձայնով, որ "Հոգի՛ն կը նորոգէ ու հանդարտ ջուրերու բով մեզ կ'առաջնորդէ" --Սաղմոս ԻԳ.Զ-Յ: Հոգեկան լուրթեան մէջ կ'իմացուի աստուածային ցայգանուագ գրոյցը և մեր աղօթքներուն պատասխանները:

Եթէ չ'ունինք աղօթելու վարժութիւն կամ սովորութիւն, բնաւ ուշ չէ սորվիլը և վարժուիլը: Մեր եկեղեցական աւանդութիւնները հարուստ են հոգեթով աղօթքներով, որոնք թոյլչօ և խոյանք տուած են անհամար հաւատացեալներու: Ուսումնասիրե՛նք Ս. Գրիգոր Նարեկացիի **«Ի Խորոց Արտի, Խօսք Ընդ Աստուծոյ»** աղօթքները, որոնք պիտի բանան մեր հոգւոյն գաղտնաթափանց աչքերը: Կարդա՛նք Ս. Ն. Ծնորհալիի " **Հաւատով Խոստովանիմ**" աղօթքները, միացնենք մեր ձայնը անթիւ հաւատակիցներու և ներշնչուինք Սուրբ Հոգւոյն պարգեւներով: Կարդա՛նք **Աւետարանները** աղօթքները ու թափանցենք հաւատացեալներու փորձարակա՛ն կեանքին ու Աստուծոյ հետ իրենց ունեցած յարաբերութեան և հաղորդութեան:

Մոյն սրբազան գրութիւնները որպէս ֆետիջիզմ (թերափապաշտութիւն) մեր բարձերուն տակ չպահենք միայն, այլ իւրացնենք: Կրկնենք զանոնք հոգիով և հաւատով մինչեւ մեր էութիւնը՝ իր ամենայետին բջիջով հաւատայ և վստահի Աստուծոյ:

Բացարձակ լուրթեան մէջ, մեր խորհուրդները և մտածումները բարձրանալով պիտի միանան այն Մեծ Խորհուրդին որ Ակնադրիւրն է մեր "կայծ" մտածումներուն և խորհուրդներուն:

Օգոստոս 3, 1991

Թորոնթօ

ԼՈՌԻԹԵԱՆ ԶԱՅՆԵՐԸ

Ժողովուրդներ միայն լեզուական բարբառով չեն խօսիր, այլ յաճախ անոնք կը խօսին մարմնի՝ յատուկ լեզուով, իրենց մարմնակա՛ն ներկայութեամբ: Յաճախ, լուռ արտայայտութիւնները աւելի՛ ազդեցիկ և հզօր կը դառնան քան խօսքով և բառով նկարագրուածները: Բնութիւնը բառագիտութեամբ չի խօսիր, այլ երկրաշարժութեամբ, սեւ մութ ամպերու փայլատակումներով, որոտումներով և ծաղիկները՝ իրենց անուշահոտ բուրմունքով: Իսկ երկու իրար սիրողներ, աչքի յուզումնալից նայուածքով:

Դիտող աչքերու համար չափազանց ակներեւ է նաեւ հաւատացեալներու անխօս բարբառումը Ա. Ծնունդի և Ա. Զատիկի Տօնակատարութիւններուն:

Եկեղեցական հիմնարկութիւնները՝ իրենց հոգեւոր և աշխարհական կազմակերպութեամբ, ստէպ գանգատ կը յայտնեն, որ եկեղեցւոյ Պատարագի, Ժամերգութեան կամ Բարոզի ներկայ գտնուողներ յամբար կը պակսին: Հաւատացեալներու եկեղեցիէն բացակայութիւնը և պակսիլը ընդհանրապէս կը վերագրուի Հայ հաւատացեալներու թերահաւատութեան, նիւթապաշտութեան կամ անտարբերութեան, հանդէպ իրենց կրօնական աւանդութիւններուն: Տօնական օրերը կ'ապացուցանեն մեզի, թէ հայը ո՛չ թերահաւատ է ու ո՛չ ալ անտարբեր իր դարաւոր հաւատքին և եկեղեցիին հանդէպ երբ խուռներամ կը լեցնէ եկեղեցին: Տօնական օրերու եկեղեցական խճողումը "լուծեա՛ն ձայն" է: Հաւատացեալներ՝ իրենց մարմնաւո՛ր ներկայութեամբ կը ջանան իրենց հաւատարմութիւնը բացատրել անբարբառ լեզուով:

Ի՞նչ կը նշանակէ բացակայ Հայ հաւատացեալներու "լուռ ձայնը":

1.--Իրենց ներկայութեամբ՝ անոնք կը ջանան ապացուցանել թէ իրենք ժառանգորդներն են այդ Ա. Հիմնարկութեան: Անոր մէջ կը գտնեն իրենց հաւատքին ուղեծիրը, հոգեկան մտորումները և բարոյական հիմնախարիսխը:

2.--Եթէ բացակայ հաւատացեալները ըլլային անհաւատ կամ անտարբեր իրենց Զրիստոնէական հաւատքին հանդէպ, զիրենք պիտի գտնէինք մզկիթի մը, մեհեանի մը, գինետան մը, կամ "կոլֆ գլապի" մը մէջ Սուրբ Զատիկի Օրը:

3.--Զորրորդ դարէն ի վեր, հայ անհատին գիտակցական և ենթագիտակցական վիճակը կազմող մեծագոյն ազդակը եղած է իր հաւատքը, ու ցարդ նոյն անխորտակելի հաւատքը իր վարակիչ ուժն է:

4.--Բացակայ հաւատացեալները, Իրենց աննկուն հաւատաւորի խանդով և լուծեամբ, կ'ուզեն *խմատաւորութեան տեսնել* իրենց հաւատքը 20-րդ դարու նիւթապաշտ ու ջուարումի և դէպի յորձանուտ անկումին մէջ: Յիսուս Զրիստոս սաստած էր օրէնքի վարդապետները ըսելով.

«Վայ ձեզի, որ կը պահէք գիտութեան բանալիները, որով չէք մտնել և մտնողներուն ալ արգելէք կ'ըլլա՛ն» -- Լուկ. ԺԱ. 52:

5.--Արեւելի խորհրդապաշտ կրօնները ալ աւելի բացատրուած կը քարոզուին այսօր Արեւմուտքի մէջ, քան թէ մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի յայտնաբերած ճշմարտութիւնները: Բրիստոնեայ ծնած, կարեւոր թիւով անհասներ, ներկայիս արեւելեան կրօններու խորհրդապաշտութեան մէջ գտած ըլլալ կը կարծեն ճշմարտութիւնն ու հոգեկան լուսաւորումը:

6.--Ունեցե՛ք խօսակցութիւն մը մասնագետի մը, գիտնականի մը կամ պարզ գործաւորի մը հետ, և անմիջապէս պիտի տեսնե՛ք, որ ձեր խօսող ընկերոջ մեծագոյն հետաքրքրութիւնը՝ հաւատքի, հոգիի և անդենականի շուրջ պիտի դառնայ:

Ինչո՞ւ արդեօք, հաւատքով և անդենականով հետաքրքիր անձեր, հեռու կը մնան իրենց սիրած եկեղեցիէն: Անոնք՝ հեռու և բացակայ են եկեղեցիէն մարմնապէս միայն, սակայն հոգեպէս, մէջն են եկեղեցիին:

Ի՞նչ են այն կարեւորութիւնները, որ հոգեպէս եկեղեցին սիրողները, մարմնապէս ալ ներկայ ըլլան Հայ ժողովուրդին գոյատեւման ու անոր հաւատքի հիմ՝ Յիսուս Բրիստոսի Ա. եկեղեցիին մէջ: Ինչ որ շարժուն է աւելի կը հետաքրքրէ մարդը քան թէ կայուն իրերը, ինչպէս շարժապատկերը: Ուստի եկեղեցական հիմնարկութիւնը դարձնելու է շարժունակութեան:

Եկեղեցիին մէջ, սովորաբար, ձգտում մը պրկում մը կայ, դառնալու հիմնարկութիւն փոխանակ շարժումի: Աշխարհ կը մոռնայ, որ Բրիստոնեական հաւատքը տարածողներն ու շատագովողները, ընդհանրապէս, աշխարհականներ էին: Նաեւ մենք մոռնալու չենք, որ Ա. Խորանի սպասաւորող բոլոր անձերը, և ոչ միայն կղերը, վկաներն են մեր Տիրոջ Յիսուս Բրիստոսի:

Ա. Խորանին սպասարկուներուն պաշտօնը կը սկսի ոչ թէ երբ Ա. Խորանին վրայ են միայն, այլ երբ կ'իջնե՛ն անկէ ու կը խառնուի՛ն ժողովուրդին մէջ: Իրենց խօսքով և լուր շարժուձեւերով անոնք շրջուն քարոզիչներ, ուժգնութեամբ պատմող, կեանքի աննիւթապաշտ ըմբռնումները ներկայացնող առաքեալներ են:

Եկեղեցիին նիւթական կառույցը կարեւոր է, սակայն ալ աւելի հրամայական է դարձնել զայն հոգեւոր դարբնոցի և անխորտակելի հոգեւոր հայրենիքի: Հայ ժողովուրդի հոգեւոր հարցումներու ակնադրելի դառնալու է "Եկեղեցին Հայկականը": Նիւթապաշտական աշխարհականութիւնը, ապակրօնութիւնը կամ ջլացուցիչ օտար հաւատալիքներ չհրապուրեն հոգիներն ու մտքերը՝ արթնցող Հայ հաւատացեալին:

Եկեղեցին՝ իր սրահներով և լսարաններով դառնալու է Արմա՛ջ մը և դարեւան մը սփիւռքի տարածքին պատրաստելու ուխտապահ ժառանգորդներ, որոնք պիտի դառնան կամաւոր ջահակիրները Յիսուս Բրիստոսի հաւատքին: Մտածե՛նք այսօր, և ծրագրե՛նք ապագան: Լսենք անլռելի ձայնը Հնդկաստանի և Ժայռագոյն արեւելի թափուր մնացած Հայ եկեղեցիներուն, ուր խօսողները՝ միայն վարդակարմիր աղիւսներն ու քարերը մնացած են:

Այսօր, ուշ չէ պատրաստուելու վաղուան համար: Վարդանանց ճակատամարտը կը յիշեցնէ մեզ ոչ միայն Վարդան դիւցազնի բազուկը, այլ նաեւ Ս. Ղեւոնդեան երկնաշունչ խրախոյսն ու ոգեկոչումը: Յարգա՛նք Հայ Բաղաճական կուսակցութիւններու և անոնց սատարած ազգային գարթօնօնօն: Միթէ Հայ ժողովուրդը արթննալու էր միայն Բաղաճականապէ՞ս թէ նաեւ *հոգեւորապէս*: Առանց հոգեւոր վերածնունդի, ժողովուրդ մը կը կորսուի, ինչպէս պատմութիւնը ցոյց տուած է: Համաշխարհային Առաջին Պատերազմէն ետք, վերածնած Նացի Գերմանիան ու Համայնավար Խորհրդային միութիւնը կորսնցուցին իրենց Քրիստոնէական հաւատքը: Իրենց նիւթապաշտական աշխարհականութիւնը և ապակրօնութիւնը, զիրենք Բշեցին գազանային արիւնահեղութեան Երկրորդ Համաշխարհային Պատերազմին, ուր միլիոնաւոր անմեղ ազգասերներ բնաջինջ եղան:

Ս. Եկեղեցին հոգեւոր թումբն է հաւատքի որ կրնայ արգիլել մահացու նիւթապաշտութեան և օտար գաղափարաբանութիւններու մուտքը իր հաւատացեալներու հոգիներէն ներս:

Այս սրբազան ու նուիրական պատասխանատուութեան համար կանգնած է Եկեղեցին իր հիմնարկութեամբ թէ հոգեւոր և թէ աշխարհական սպասաւորներով: Ինչո՞ւ չնորոգել իր նուիրական գործը արդի մտայնութեան: Այժմու նոր սերունդը հոգեմտաւոր արթնութիւն ունի և կը փափաքի ճանչնալ իր հաւատքը **նաեւ իմացականօրէն, և իմաստաւոր-լա՛ծ** հասկացողութեամբ:

Եկեղեցիէն կ'ակնկալուի որ ան ունենայ հետեւողական նպատակ պատշաճեցնելու 20-րդ դարու գործնական արդիականութիւնը մեր աւանդական հաւատքին, դառնալու համար գործօն և վարակիչ ուժ մը: Եթէ Եկեղեցին կարենայ նոր սերունդին Քրիստոսի սերն ու հաւատքը փոխանցել այն ատեն Վարդանանք և Ղեւոնդեանք ի գուր տեղ նահատակուած պիտի չ'ըլլան: Եկեղեցին իր ապրումո՛վ, իր սուրբ կենցաղո՛վ ու իր ջօշափելի՛ հաւատքով ցոյց տալու է իր առաքելութիւնը և կոչումը՝ այսօր:

Մարտ 6, 1991

Թորոնթօ

ԱՂՕԹԵԼ ՅԻՍՈՒՍԻ ԱՆՈՒՆՈՎ

Յով. ԺԶ. 24

Յիսուս Զրիստոս Իր դատապարտութեան նախօրեակին, շատ հաւանական է Սուրբ Հաղորդութենէ վերջ, քաջալերելու համար աշակերտները, խօսած է հետեւեալ յորդորը. *«Ճշմարտութեամբ կ'ըսեմ ձեզի թէ՛ իմ անունովս ի՛նչ որ խնայրէ՛ Հօրմէն՝ պիտի տայ ձեզի: Արնչեւ հիմա՝ ոչ ինչ խնայրեցիք իմ անունովս խնայրեցէ՛ք՝ ու պիտի տանամ, որպէսզի ձեզ ուրախութիւնը լման ըլլայ»*--Յով. ԺԶ. 24:

Ինչո՞ւ մեր խնդրուածքները ընելու ենք Աստուծոյ, Յիսուսի *անունով* Որովհետեւ վաղ անցեալին մէջ ապրողները կը հաւատային, թէ անձի մը տրուած անունը անոր նկարագրին և իսկութեան գօրութիւնը կը նշանակէր: Հրեաները կ'աղօթէին Աստուծոյ Աքրահամի՛ անունով (*Աքրահամի, Իսահակի և Յակոբի Աստուածը ըսելով*): Ուստի Յիսուսի անունով աղօթել, կը նշանակէ **Ճանչնալ** Չայն ու Անոր գօրութիւնը: Ճանչնալ գիտելիքներ ամբարել չէ միայն, այլ ճանչնալ է ենթական: Զճանչնալով պաշտելը՝ կոապաշտութիւն է, և չի կրնար գոհացում տալ աղօթողին: Յիսուսի *միջնորդական և բարեխօսակա՛ն* աղօթքին մէջ (Յով. ԺԷ.3) կը կարդանք.

***«Յախտենական կեանքը այս է՝
որ ճանչնան քեզ միակ ճշմարիտ Աստուած,
և ճանչնան Յիսուս Զրիստոսը, զոր դուն դրկեցիր»:***

Յիսուս կ'ըսէ. *«Հաւատացէ՛ք Աստուծոյ, հաւատացէ՛ք նաեւ ինձի»*--ԺԴ.1: Ինչպէ՞ս կարելի է հաւատալ մէկու մը եթէ չճանչնա՛նք զայն: Երբ ըսենք թէ մենք այսինչը կը ճանչնանք, ըսել կ'ուզենք թէ գիտենք անոր անունը, անոր հետ յարաբերութեան մէջ ենք, ու կրնանք անոր մասին վկայել: Մեզ սիրող Տէրը Յիսուս եւս կ'ուզէ որ մենք ճանչնանք Զինք, վստահի՛նք Իր բարեխօսութեան ու մեր աղօթքին մէջ, առ Հայր երկնաւորը, մեր աղերսը ներկայացնենք Ի՛ր անունով: Նոյնիսկ Պօղոս առաքեալ եւս կը պատուիրէ իր գործակից Տիմոթէոսին ըսելով. թէ Աստուած կ'ուզէ որ բոլոր մարդիկ փրկուին ու *հասնին ճշմարտութեան գիտութեան*:

***«Ըանգի կայ մէ՛կ Աստուած, նաեւ մէ՛կ Միջնորդ Աստուծոյ
և մարդոց միջեւ. Մարդը՝ Յիսուս Զրիստոս»*--1 Տիմ. Բ. 5:**

Ինչպէս ընկերային կեանքի և միջազգային առեսրական գործի մէջ մարդ անհատը կամ կառավարութիւններ կարիքը ունեցած են միջնորդի, մը որպէսզի իրենց գործը յաջողեցնեն: Նոյնպէս ալ հոգեկան աշխարհի մէջ

հաւատացեալներ կարիքը ունին Միջնորդի մը երկնքի մէջ, որովհետեւ իրենք ապրող վկաներն են երկրի վրայ Անո՛ր որ զիրենք դրկեց վկայելու: Պետրոս առաքեալ իր փորձառական իմաստութեամբ կ'ըսէ.

«Զկայ փրկութիւն ուրիշ մէկու միջոցով, որովհետեւ երկնքի տակ չկայ մարդոց տրուած ուրիշ անուն, որով կարելի ըլլայ մեր փրկութիւնը» -- Գործք. Դ. 12:

Յիսուս Ինքզինք ընծայած է օգնելու մարդկութեան, որպէս *Բարեխօս և Միջնորդ*. Մենք ալ որպէս հաւատացեալ բրիստոնեաներ որքա՞ն կը գործածենք Յիսուսի անունը որպէս Միջնորդ, երբ կ'աղօթենք Հա՛յր Աստուծոյ: Եթէ չենք գործածէր Յիսուսի անունը, այդ կրնայ եղած ըլլալ թերացում կամ Յիսուսի հետ ջատ մօտէն յարաբերութիւն չունեցող մը: Յիսուս կը փափաքի մտերմանալ մեզի հետ: Ուստի հրաւիրենք Զայն մեր մէջ ու ճանչնանք Անոր սերը մեզի հանդէպ:

Մինչեւ մեր օրերը, չրեաները կ'աղօթեն Աստուծոյ, Աբրահամի, Իսահակի և Յակոբի անունով: Ըստ մեր Փրկիչ Յիսուսի հրահանգին, Բրիստոնեաներ եւս աղօթելու են Հօր Աստուծոյ, և իրենց խնդրանքը ներկայացնելու են Յիսուսի՛ Անունով: Այս խնդրանք աղերսը մեծ տարբերութիւն մը ստեղծեց առաքեալներու օրով չրեական աւանդապաշտութեան մէջ: Հետեւաբար չրեայ Բահանայական դասը սկսաւ հալածել առաքեալները, պաշտպանելու համար իրենց ազգայի՛ն աւանդութիւնն ու Մովսէսի տուած Օրէնքը:

Կարդանք Գործք Առաքելոց երրորդ գլուխը:

«Պետրոս և Յովհաննէս տաճար կ'ելլէին իններորդ ժամու աղօթքին համար: Եւ ի մօրէ կաղ ծնած մարդ մը կար...Ան տեսնելով Պետրոսը և Յովհաննէսը որոնք տաճար կը մտնէին՝ կ'աղաչէր որ ողորմութիւն ստանայ: Պետրոս, Յովհաննէսին հետ, նայեցաւ անոր և ըսաւ. "Մեզի՛ նայէ": Ան դարձաւ անոնց և կը յուսար բան մը ստանալ անոնցմէ: Եւ Պետրոս ըսաւ. «Արծաթ և ոսկի չունիմ, բայց ինչ որ ունիմ՝ բեզի կու տամ զայն. **յանուն և նազովրեցի Յիսուս Բրիստոսի՛** ոտի՛ ելիր և բալէ՛»: ...Ան վեր ցատկեց և սկսաւ բալել ու անոնց հետ տաճար մտաւ. և կը բալէր, կը ցատկէր ու կ'օրհներ զԱստուած»:

1952 թուականին որպէս զբօսաշրջիկ Գանատա մտայ որպէսզի կարենամ այս երկրին քաղաքացին դառնալ: Ըրածս ապօրինի ձեւ մըն էր, սակայն ուրիշ կերպով անկարելի էր ինձ համար: Միջնորդի մը պէտքը ունեցայ, որ զիս ներկայացնէ ներգաղթողներու գրասենակի պաշտօնեային: Երկու ժամ Անկլիզան եկեղեցւոյ Dr. Judd-ին միջնորդութեամբ մեր խօսակցութեան արդիւնքն էր, որ ես անարժան էի Գանատա մտալ և նոյնիսկ հարցարանը

լեցնելու արտօնութիւնը չունեցայ: Աւստրալիոյ Եպիսկոպոս Goodwin Hudson, որու ընկերակցութեամբ Լոնտոնի պարտէզներուն մէջ ամիս մը բացօթեայ ֆարոգութեամբ զբաղած էի, ինծի հասցէ մը տուած էր հանդիպելու տիկնոջ մը Օթթաուայի մէջ, որ կրնար իմ Գանատա մնալուս միջնորդել: Նամակով մը իմացուցի այս տիկնոջ իմ պարագաս: Նամակ մը ստացայ որուն ամբողջութիւնը միայն մէկ նախադասութիւն մըն էր: Այս տիկնոջ նամակին մէջ հեռաձայնի թիւ մը կար, ու կը յանձնարարէր ինծի, որ հեռաձայնեմ այդ թիւին: Թորոնթոյի հայերը զգուշացուցին զիս, թէ կարելի չէ հեռաձայնել: Շարաթ մը սպասելէ յետոյ փորձեցի հեռաձայնել այդ թուին և ստացած պատասխանս կ'ուզեմ անգլերէն ըսել. "My friend Mr. Noradunkian where have you been, we are waiting for you a whole week". Հարցուցի իրեն թէ կրնայի զինք տեսնել պաշտօնեան ըսաւ թէ անմիջապէս երթամ զինք տեսնելու:

Երբ իր մօտ գացի, աթոռ մը առաւ և իր գրասեղանին բով դնելով ըսաւ ինծի սիրալիւր ընդունելութեամբ թէ Գանատան ինծի նման մարդոց կարիքն ունի: Հագիւ խօսելու սկսած էինք, ըսաւ ինծի, «այս վայրկեանէն սկսեալ դուն Գանատահպատակ ես, ու եթէ ոեւէ մէկը, ոստիկան մը կամ կարավարական պաշտօնեայ մը բեզ նեղէ, անմիջապէս ինծի հեռաձայնէ» և իր գրասենեակին և թէ իր տանը հեռաձայնին թիւը տուաւ:

Ինծի դրկուած այդ մէկ համեստ նախադասութեան մէջ գտնուած անունն ու հեռաձայնի թիւը, իմ և իմ ընտանիքիս Գանատա հաստատուելու ամբողջական իջիսնութիւնը ունէր: Եթէ ես Հայ գորգավաճառներու խօսքը մտիկ ըրած ըլլայի ու չհեռաձայնէի, Գանատա հաստատուելու իրաւունքէս զրկուած պիտի ըլլայի: Եթէ երկրաւոր մարդոց անունը գործածելով կարելի է գոց դռները բանալ, որքա՞ն անելի հզօր է Յիսուս Զրիստոսի անունը:

Յիսուս Զրիստոս ո՛չ թէ նամակով մը իմացուց գործածել Իր հրաշագործ անունը, այլ անձա՛մբ եկաւ աջխարհ, նուիրելու մեզ Իր Անունը, միջնորդութիւնը և *բարեխօսութիւնը առ Հա՛յր Աստուած*: Մեզի կը մնայ ըլլալ խոնարհ և իմաստուն, գործածելու և շնորհակալ ըլլալու իրեն, որ մեզի նման մեղաւորները թէ կը սիրէ և թէ Իր անունը գործածելու իրաւունքը տուած է:

Մայիս 13, 2000
Թորոնթօ

ԱՂՕԹԵԼ՝ ՀՈԳԵԿԱՆ ԵՒ ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑԱԿԱՆ

ՎԵՐԱՅՈՒՄ ԴԵՊԻ ԱՍՏՈՒԱԾ

Ինչպես աղօթելու է Աստուծոյ:

Մարդ ինչպէս որ կը խօսի իր ծնողքին և բարեկամին հետ, նոյնպէս ալ խօսելու է իր Արարչին հետ: Աստուած խօսիլ շնորհեց մարդուն, որպէսզի Արարիչ Աստուած և մարդ արարած միասին խօսակցին և յարաբերին: Յիսուս աղօթելու և Աստուծոյ հետ խօսելու մտերմութիւնը ակտի եւս կը ջեջտէ Իր աղօթքին մէջ ու կ'ըսէ.

«Մտկայն միայն անունց հաւար չէ որ կ'աղաչեմ, այլ եւ անունց խօսմով բոլոր Ինձի հաւատացողներու ն հաւար, որպէսզի ամէնքը մէկ ըլլան, ինչպէս Գուն, Հա՛յր, Իմ մէջս և ես՝ Ընդ մէջը, որպէսզի անունք ալ մեր մէջը ըլլան»
--Յով. ԺԷ. 20-21:

Աղօթքը հոգիին տենչն է դէպի վսեմը, սուրբը, գեղեցիկը՝ դէպի Աստուած: Աղօթքը սրտերու լուծեան մէջ միայն կը մըմնջուի: «Գործօն աղօթքը սեր է և գործօն սերը՝ ծառայութիւն է ընկերին»: Աղօթքը կ'արժանանայ իր լման գօրութեան, երբ աղօթող անձը հրաժարի բոլոր պիղծ մտածումներէ և անամբուր խորհուրդներէ ու սրբութեամբ, ներողամտութեամբ և անձնուրացութեամբ մօտենայ իր Արարիչին: Աղօթքը կ'արժանաւորուի Աստուծով, երբ աղօթողը ի՛ր հոգիին ներկայութեամբ և բառերուն իմաստը ըմբռնելով կ'աղօթէ ապաշխարանքի և գոջումի հոգիով:

Երգն ու աղօթքը անբաժան են իրարմէ: Մէկը սրտէն է, տաճուկ ջունչով, իսկ միւսը կը նմանի արցունքի...:

Հեթանոս ազգերու մէջ աղօթքը արջարի մը զոհագործումն էր: Հրելութեան մէջ, աղօթքը՝ արտաքին օրէնքի պարտաւորութիւնն էր: Նիւթապաշտներու համար աղօթքը հինցած գաղափար մը կը սեպուի: Իսկ Զրիստոնէութեան մէջ Չաւակը մօրմէն կը սորվի, թէ ո՞վ է Աստուած, ո՞վ է Զրիստոս, ի՞նչ է սերը, ի՞նչ է աղօթքը, ինչպէ՞ս պէտք է ապրիլ կեանքը: Վերոյիջեալ երեք մատուցումներն ալ անհրաժեշտ հոգեկան ներածութիւններ են: Տեսնենք թէ Աստուած ի՞նչ կ'ուզէ մարդ արարածէն:

Աստուած կը խօսի Եսայի մարգարէին միջոցով ու կ'ըսէ.

Բայց ես ասոր պիտի նայիմ,

Այսինքն խոնարհին և կոտրած հոգի ունեցողին

Ու իմ խօսքէս դողացողին:

Արջառ մորթողը մարդ մեղցնողի պէս է,

Գանունկ զոհողը ջուն մորթողի պէս,

Նուէր մատուցանողը խոզի արիւն մատուցանողի պէս,

Կնդրուկ ծխողը կուռք պաշտողի պէս,

Իրաւքընէ անունք իրենց ճամբաները ընտրեցին,

Ու անոնց հոգիները իրենց գարշելիներէն կ'ախորժին:

--**Եսայեայ 66. 2-3:**

Ազդու և արդիւնաւոր գործօն մըն էր աղօթքը Յիսուսի կեանքին մէջ: Յիսուսի համար աղօթքը հաղորդակցութիւն և *արտակցութիւն* էր Իր երկնաւոր չօր հետ: Հոգեկցութիւն և ընկերակցութիւն մըն էր: Հասուն հաւատացեալին աղօթքն ալ՝ **«Տո՛ւր, տուր ինձի»**էն կը վերածուի **«Ըրէ՛ գիտի** նման "Անառակ Որդիին": Աղօթքը գօրութեան և կեանքերը հիմնովին փոխող վառ իրականութիւն մըն է: Կարդացե՛ք կեանքերը Մարիամ Մագթաղենացիին և Զակեոնս մաքապետին:

«Տէրունական Աղօթքը կարելի է մէկ վայրկեանի մէջ արտասանել, բայց ամբողջ կեանքի տեսողութեան ճգնիլ անոր մարտակոչը յաղթանակի վերածելու համար»--**Վեր. Վ. Յ. Թութիկեան:**

1. "Աղօթքը անկեղծ հոգիին ինքնաբոլի պոթկումն է":
2. Աղօթքը հեզութեան, անբարկութեան, անյիջաչարութեան և սիրոյ բխումն է:
3. Աղօթքը խնդրութեան, խաղաղութեան և գոհութեան բխումն է դէպի լաւագոյնը:
3. Աղօթքը տրտմութեան տարակուսանքներու և վիշտերու հրաժարադէպ սփոփանքն է:

Աղօթքը բիւելու է անձի մը ներքնագոյն էութենէն: Աղօթողը անկեղծ ու յանձնատու ըլլալու է իր խօսքերուն և խնդրանքներուն հանդէպ, ու ո՛չ ջատախօս:

1. Աղօթողը պարտ է զգալ Աստուծոյ մեծութեան ներկայութիւնը և անճառելի սրբութիւնը:
2. Պետրոսի աղօթքը Պայծառակերպութեան՝
3. «Պետրոս չէր գիտեր թէ ինչ կը խօսէր»: Ան աղօթեց ինչ որ բերանը եկաւ...Մարկոս Թ. 4:

Աղօթք մը կ'արժեւորուի և կը լսուի այնքան, որքան աղօթողը ապրած է իր խնդրանքը: *Աղօթք և ապրուս* պարտ են միահիւսուիլ:

Աղօթքը երկխօսութիւն մըն է Աստուծոյ հետ, որուն առջեւ կը բանանք մեր սրտերն ու մեր գաղտնիքները:

Աղօթքը մարդուն ներսէն մղում մըն է դէպի Աստուած, և աւելին թոյլչօ մըն է: «Արդարեւ էական է որ մարդ պայքարի իր իսկ խորհուրդներուն դէմ եթէ կը փափաքի որ վերանայ իր մտածումներով հիւսուած վարագոյրէն որ կը ծածկէ իր միտքը: Այդպիսով միայն, ան կրնայ իր հայեացքը առանց դժուարութեան դարձնել դէպի Աստուած, և խուսաբիլ իր թափառող խորհուրդներու կամքին հետեւել»-- **Սբ. Ամոնաս ճգնաւոր** 288-350 թուականին:

«Մարդ, աղօթքով պիտի ձգտի Յաւիտենականին, պիտի հասնի Անհասին,

տեսնէ Անտեսանելին, ընդգրկէ Անսահմանը և ապրի Յաւիտենականը»:

Նահատակներո՛ւ երկիր է Հայաստան աշխարհը, սուրբերու աղօթքով թաթաւուած և մարտիրոսներու արեամբ ոռոգուած: Բիւզանդիոնի Այա-Սոֆիան ինկաւ Իսլամ մահիկի հարուածներուն տակ, սակայն Ս. Էջմիածին կը ծածանի դեռ իր խաչերով ու հաւատացեալներով և անոր խուճկի անուշահոտութիւնը կը բարձրանայ երկինք Հայ նահատակ պաշտպաններուն աղօթքով: Իւրաքանչիւր օրը նկատելու ենք պարգեւ մը ու բանալու ենք զայն աղօթքով:

Բազմութիւնը. «Կաղաչէր Յիսուսի, որ գոնէ միայն Իր զգեստի բղանցփին դաչին. և անոնք որ անգամ մը դպան՝ բժշկուեցան»--Մատթ.

ԺԴ. 30: Յիսուս Բրիստոս ա՛յսօր ալ մեզի հետ է Իր անտեսանելի բայց իրա՛ւ ներկայութեամբ: Դաչի՛նք Անոր բղանցփին մեր աղօթքով ու հաւատքով:

«Խնդրեցէ՛ք նախ Աստուծոյ Թագաւորութիւնը և Իր արդարութիւնը, և այդ բոլորը աւելիո՛վ պիտի սրուի ձեզի»--Մատթ Զ. 33: Ինչո՞ւ նախ Աստուծոյ Թագաւորութիւնը և Անոր արդարութիւնը խնդրել: Ժամանակի ներկայ ընթացիկ շրջանին, պայքարամարտի մէջ են Բարին ու չարը: Յիսուսի մկրտութենէ յետոյ, Սատանան յանդգնեցաւ նոյնիսկ փորձել և իր կողմը հրապուրել ԱստուածՈրդի Յիսուսը ցոյց տալով Անոր աշխարհի բոլոր Թագաւորութիւններն ու անոնց փառքը և առանց խայնելու ըսաւ. «Այս բոլորը բեզի պիտի տամ, եթէ գետին իյնալով երկրպագես ինձի»: Իսկ Յիսուս ըսաւ նենգաւոր փորձիչին. «Ետի՛ս գնա, (կորսուէ՛) Սատանայ, որովհետեւ գրուած է՝ պիտի երկրպագես բու Տէր Աստուծոյդ և Զա՛յն միայն պիտի պաշտես»:

Իրաւամբ երբ ժամանակը լրանայ չարին, ու զայ Աստուծոյ Թագաւորութիւնը, մարդկային խնդրանքները կատարուած պիտի ըլլան Աստուծոյ բարի կամքովը:

1. Խնդրել կը նշանակէ "նշան առնել" "նպատակը դիտել", "թիրախը կարենալ տեսնել":

2. Բրիստոնեայի մը առաջնակարգ նպատակակէտը՝ Աստուծոյ Թագաւորութեան գալը, ըլլալու է:

«Խնդրեցէ՛ք, և պիտի սրուի ձեզի, փնտռեցէ՛ք, և պիտի գտնե՛ք, բախեցէ՛ք (*ակնածութեամբ*) և պիտի բացուի ձեզի. որովհետեւ ով որ խնդրէ՛ կը ստանայ, ով որ փնտռէ՛ կը գտնէ, և ով որ բախէ՛ պիտի բացուի անոր»--Մատթ. է. 7: "Keep on asking".

Ի՞նչ է աղօթքը:

Աղօթքը ինքնասարբազրութեան լաւագոյն առիթն է: Աղօթքը զէնքն է անզէն հաւատացեալին: Աղօթքը նման ձգողական զօրութեան անտեսանելի ազդեցութիւն մըն է: Աղօթքը հասնիլ է Գերբնականի ներկայութեան, որ արդէն հոն է Իր սիրոյ ու ողորմութեամբ: Աղօթքը վարժութիւն մը պէտք է

դառնայ, զօրաւոր պահանջք մը, ոչ թէ միայն նեղութեան և տագնապի միջոցին, այլ նաեւ փառաբանութեան:

1. Աղօթքը աւելի մտիկ ընել է լռելեայն, բան խնդրանք և աղերս:
2. Աղօթասաց դիրքաւորումը հոգեկան վարժութիւնն է, որ ենթական իր հոգեկա՛ն էութեան մէջ շարունակ կ'աղօթէ՝ հաղորդութեան և յարաբերութեան մէջ կը պահուի Աստուծոյ հետ:

Աղօթքը վսեմ ու վեհ յարաբերութեան ճամբայ մըն է որ կը կամրջէ մարդը աշխարհէ դէպի երկինք՝ դէպի Աստուած:

1. Աղօթքով մարդ դէմ յանդիման կու գայ իր «ես»ին հետ:
2. Աղօթքը ինքնատեսութեան միջոցն է:

Աղօթքով կեդրոնացնենք և սեւեռենք մեր մտածումները, տարակուսանքները և կասկածները առ Աստուած, գղջումի և ապաշխարութեան հոգիով: Ի պահանջեալ հարկին, պահեցողութեամբ՝ Աւետարանի ոգին, Յիսուս Ինք 40 օր ծով պահեց: Մարմինը կը կատարէ ա՛յն, ինչ որ հոգին կը պատուիրէ անոր: Երբ մարմինը տիրապետէ հոգիին, այդ մեղանչում է: «Աղօթքը շարժումն է այն չուանին՝ որուն ծայրը կապուած զանգը երկնքի մէջ կը հնչէ» ըսած է **Լամբրոնացի հայրապետը**:

Աղօթքը վսեմ ու վեհ յարաբերութեան ճամբայ մըն է, իրա՛ւ և անտեսանելի որ կը կամրջէ աշխարհէ դէպի երկինք ու մարդէն դէպի Աստուած:

Ինչու աղօթել

Աղօթքը կը ծնանի հերոսներ, կը կերտէ ազատարարներ և կը դարբնէ նուիրեալներ, կը պարգեւէ յաւերժացողներ: **Աղօթքը հոգւոյն հացն է:** Մեղաւոր ու սխալական ըլլալու գիտակցութեամբ է, որ աղօթքը իմաստ կը ստանայ:

1. Մեղքի գիտակցութիւնը ունի հետեւեալ հոգեբանական զարգացման աստիճանները,
 - ա. Ինքզինք բննադատել,
 - բ. Ինքզինք պատժել,
 - գ. Ինքզինք ուղղել:
2. Մարդ այն միակ էակն է աշխարհի վրայ, որ ունի ինքնագիտակցութիւնը՝ խիղճը:

Աստուած իրաւօրէն կը փափաքի լսել մեր աղօթքը:

Գոհունակութեան զգացումը Աստուծոյ համար, ո՛չ միայն հաւատացեալին մարդկա՛յնօրէն արտայայտուիլն է, այլ՝ նաեւ լսել Իր արարածին մտահոգութիւնը, զգալ անոր սրտին խռովքը և աղօթքի ընթացքին խնդրել որ Աստուծոյ թագաւորութիւնը գայ, և Անոր կամքը ըլլայ:

«Ծանիր զԲե՛զ», դիւրին չէ, ոչ ալ հաճելի մարդու համար: Դուն Բեզ չես տեսներ այնպէս՝ ինչպէս որ ես, այլ այնպէս՝ ինչպէս որ կ'ուզես ըլլալ: Աղօթքի միջոցով պիտի տեսնես դուն զԲեզ, այնպէս՝ ինչպէս որ ես: Աղօթքի հիմնական դէպք իրողութիւնը ա՛յն է, որ Աստուած Իր ամենագէտ իմաստութեամբ կը լսէ ու կը պատասխանէ ենթակային աղօթքը:

Աղօթքի ընթացքին, սուրբը արեւ կը հաւաքէ, որպէսզի յետոյ սփռէ զանոնք իր ժողովուրդին մէջ իբր լոյս և իբր ուրախութեան ծարիկ: Աղօթքի պահը այն սրբազան պահն է, որ հնարաւոր չէ բացատրել, այլ պէտք է *սպասել, զգալ և ապրիլ*:

Հրեական բոլոր աղօթքները կ'արտայայտուին յոգնակիով: Մարդ՝ յոգնակի աղօթելով իր անձը կը միացնէ համայնքին: Պատկանելիութեան զգայնութեան վայելքը կեդրոնացած է եկեղեցւոյ պաշտամունքային հաւաքականութեան ընթացքին և միասնական աղօթասացութեան, Աղօթա-սիրութեամբ և պահեցողութեամբ:

Կը հիանանք, կը սփանջանանք մեր նախնեաց հաւատքի ուժին և հզօր կամքին, որուն առջեւ ժայռերն անգամ կը բացուէին, ու կը վերածուէին աղօթավայրերու և ուխտատեղիներու՝ հոգեկան ովախսներու: Յիսուս կը նայի Իր աշակերտներուն վրայ ու երկար խոկումէ մը յետոյ կ'ըսէ անոնց. *«Արհնէ՛ք հիմա Իմ անու նովս ոչինչ խնդրեցի՛ք. խնդրեցէ՛ք»* (keep on asking) *և պիտի ստանա՛ք, որպէսզի ձեր ուրախութիւնը կատարեալ ըլլայ*: --Յով. ԺԶ. 24: Առ Աստուած նայիլը աղօթել է արդէն...:

Գերագոյն աղօթքը լուծեամբ Աստուծոյ առջեւ խոնարհիլ է, երբ մարմինը լուռ է հոգին կ'աղօթէ: Աստուած Ինքզինք կը յայտնէ հոգիով խոնարհներուն և փոքրիկներուն, ոչ փոքրոգիներուն: Խաչեցեալը մեզ կը կանչէ աստուածգիտութեան Լոյսին: Աղօթելով կը բացուի՛նք երկնային հրաշագործ Լոյսին: Մահառելով մեր հողաջէն ճակատագրին դէմ, խնդրելով Յիսուսէ որ պահենք մեր սրտերը մահուր, ու տառապելով հանդերձ աշխարհի մէջ, նայինք ու սեւեռենք մեր աչքերը երկնաճաճանչ Լոյսին: Միայն աղօթքով կրնանք միացնել մեր կեանքերը մտածումները և ապրումները երկնային հրաշագործ Լոյսին:

Երկիրն ու երկնայինը, նիւթերէն մարդն ու Իմանալին և Պաշտելին իրար միացնող թելը ***խորհրդապաշտութիւնն*** է՝ աղօթել երկնաւոր Հա՛յր Աստուծոյ: Որովհետեւ աղօթելու այս փորձառութեան հիմնական ելութիւնը անմատչելի է բնական մարդուն: Մարդկային (հողաջէն) ճանաչողութեան, զգայական և տրամաբանական միջոցները անհաս են ըմբռնելու զայն: Ուստի, մարդ արարածին կը մնայ միակ միջոց մը որ կը կոչուի սփանջացումի վիճակ (ecstasy) մը պաշտամունքի ժամուն: Այս հոգեկան յափշտակութեան մէջ կը նահանջէ մարդուն երկրածի՛ն ինքնագիտակցութիւնը և ենթական կը նոյնանայ ճշմարտութեան, Բացարձակին՝ Աստուծոյ հետ:

Վստահ եմ, որ մեզմէ շատեր ունեցած են այսպիսի աղօթքի ժամեր, որմէ յետոյ զգացած ենք որ մեր աղօթքը և խօսակցութիւնը իմացուեցաւ Աստուծոյ կողմէ, որովհետեւ գերբնական զգացում մը ունեցանք մեր աղօթքի պահուն: Այդ գերբնական զգացումը՝ դպչի՛լն էր անջօջափելի Հոգի՛ Աստուծոյն:

Քրիստոնէութիւնը, Յիսուսի աշխարհի բերած աստուածայայտնութիւնն է: Հեթանոսական կամ կրօնական ծիսակատարութիւն մը չէ՛: Լծացած ծանծաղ ճախճախուտ մը չէ՛, այլ՝ հզօր ջրվէ՛ծ մըն է ապրո՛ղ խօսուն և կենարար: Յիսուսի կանչը և հրաւերը աշխարհի, ո՛չ թէ մարդը շտկել է, կարկտել կամ ետ Ադամի նման ընել է, այլ մեզ **աստուածացնե՛լ** է, մեզ աստուածճանաչումի՛ հասցնել է: Քրիստոնէական կեանքը արշա՛ւ մըն է հողայնութենէ դէպի հոգեկանի: Կարդանք Պօղոս առաքեալի վազքը թէ ան ինչպէ՞ս կը վազէ.

*«Արդ, ես ճիշդ այդպէ՛ս կը վազեմ. ո՛չ անստուգութեամբ. չեմ մրցիր այնպէս՝ իբրեւ թէ հով ծեծէի, այլ կը չարչարեմ իմ մարմինս և կը հնազանդեցնեմ զայն, որպէսզի չըլլայ թէ ես ինձս ոչ պիտանի նկատուիմ այն բանին, զոր քարոզեցի ուրիշներու նս--**Էջմիածնայ Թարգմանութիւն***
--Ա. Կոր. 9. 26:

*«Ես այսպէս կը վազեմ, անա, և ո՛չ թէ անտուշ ուղղութեամբ. կը մրցիմ կրփաւարտիկի մը պէս, որ օղբ չի ծեծեր: Բայց ինձզինձս սեղմումներու կ'ենթարկեմ ու կը զսպեմ, որպէսզի չըլլայ թէ ես ինձս մրցանակէն զրկուիմ, ես՝ որ ուրիշներու ն կը քարոզեմ.» --**Անթիլիասեան Թարգմանութիւն:***

Մայիս 16, 2001
Թորոնթօ

ԱՂՕԹՔԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

--Ղուկ. ԺԱ. 9-13

Եւ Ես կ'ըսեմ ձեզի. *«խնայեցէ՛ք Աստուծո՛վն, և պիտի տրուի ձեզի. փնտնեցէ՛ք, և պիտի գտնե՛ք. բախեցէ՛ք, և պիտի բացուի ձեզի. Որովհետեւ խնայողը կը ստանայ, փնտրողը կը գտնէ և բախողին առջեւ դուռը պիտի բացուի: ... Եթէ դուք որ չար է՛ք՝ գիտե՛ք ձեռք առնեցէ՛ք և լաւ պարգեւ ներ տայ, ձեռք երկնաւոր Հայրը որքա՛ն աւելի լաւ պարգեւ մը՝ Աստուծո՛վն պիտի տայ անոնց, որոնք Իրեն կը դիմեն».*

Կեանքի մէջ կան այնպիսի հարցեր ու պարագաներ, որոնք կ'իրականանան, միայն փորձարկութեամբ: Յակոբոս առաքեալ կը բացատրէ ա՛յն պարագաները, որոնց պատճառաւ մեր աղօթքները դրական կերպով չեն պատասխանուիր, ան կ'ըսէ. *«Ձեր ուզածը չէ՛ք ու նենայր, որովհետեւ Աստուծո՛վն չէ՛ք խնայեր. կամ՝ կը խնայէ՛ք և Աստուած չի տար, որովհետեւ գէշ նպատակով կը խնայէ՛ք, ձեռք հաճոյքներու և ծառայեցնելու համար».* - Յակ. Դ. 3:

Նարեկացիին երբ Աստուծո՛յ կ'ուղղէ իր խորհրդածութիւնը, ան կը հաւատայ, թէ հաւա՛տքն ու սէ՛րն է առ Աստուած իր *զօրութիւնը:* Այս հաւատքը իրեն համար կը նշանակէ ո՛չ թէ «Աստուծոյ *մասին* վկայել, այլ *խօսի՛լ Աստուծոյ հետ:* Յիսուս, երբ բանա՛յ երկինքը մեր աչքերուն, սրտի խորութիւններէ ելած լոյսը կը դառնայ հաւատք, ու մեզ կը դնէ յարաբերելու Բացարձակին՝ Աստուծոյ հետ: Ուստի սեւեռե՛նք մեր հայեացքը աղօթանուէր զգացումով և վստահութեամբ Հա՛յր Երկնաւորին:

Աղօթքի զօրութիւնը և հրաջքներու իրագործութիւնը կը կերպրուանայ եկեղեցւոյ պաշտամունքային հաւաքականութեան և *միասնակա՛ն* աղօթասացութեան մէջ--Առաքելոց Բ. 1: Այժմու Նոր Սերունդը մոռցած է մեր նախնեաց հաւատքը, ուժը և հզօր կամքը, որուն առջեւ ժայռերն անգամ կը բացուէին, ու կը վերածուին աղօթալալերու և ուխտատեղիներու:

Պօղոս առաքեալ, ոչ միայն կ'աղօթէ հաւատացեալներուն համար, այլ ի՛նքն աղօթք կը խնայէ Քրիստոսի հաւատացողներէն, ըսելով. «Շարունակ աղօթեցէ՛ք՝ արթուն հսկելով, միշտ գոհութիւն յայտնելով Աստուծոյ: Միեւնոյն ատեն աղօթեցէ՛ք նաեւ մեզի համար, որպէսզի Աստուած իր խօսքը քարոզելու լայն պատեհութիւն տայ մեզի, և կարենանք պարզել Քրիստոսի ծածուկ ծրագիրը, որուն համար բանտը կը գտնուիմ»--Կողոս. Դ. 2-3: Գերագոյն աղօթքը լուծութեամբ Աստուծոյ առջեւ խոնարհիլ է, երբ մարմինը լուռ է հոգին կ'աղօթէ: Աստուած Ինքզինք կը յայտնէ հոգիով խոնարհներուն և փոքրիկներուն:

Յաճախ, Աստուծոյ կանչին պատասխանած ենք ըսելով, որ զբաղ ենք, հիմա ժամանակը չէ: Աղօթել և Աստուծոյ հանդիպում ունենալ, ճգնաժամ մըն է, որովհետեւ Աստուած ուժ է, զօրութիւն է, ճշմարտութիւն է, և Սրբութիւն: Միայն Աստուծոյ ողորմութիւնը դիտելու չէ, այլ նաեւ Աստուծոյ Սրբութիւնը: Կ'աղօթենք Աստուծոյ միայն բան մը *առնելո՞ւ*, թէ Ձիւնք մեր

մէջ *հրաշքերու*: Մեր կարօտը առ Աստուած է, թէ Իրմէ ստանալիքներն են: Արեգակը (Աստուած) կը մնայ միջոտ անմատչելի, բայց Իր ճառագայթները կը հասնին մարդկութեան:

Աղօթքը՝ աստուածային սուրբ գերիշխանութիւնը հաստատել է մեր հոգիին մէջ: Արբազան վայրկեան մըն է մարդկային կեանքին մէջ երբ ան իր սիրտը կը բերէ որպէս զոհ մը Աստուծոյ, և անձնատուր կ'ըլլայ Աստուծոյ կամբին: Զրիստոնէութեան մէջ, անոր նշանակութիւնը հոգիի ամենէն նուիրական և սրբազան գործունէութիւնն է:

***«Աղօթքը հասնիլ է գերբնական ներկայութեան,
որ արդէն հոն է Իր սիրոյ ու ողորմութեամբ»:***

Աղօթքը արտայայտութիւնն է հոգեկան զօրեղ տենչի, սքանչացման, վիշտի, թախիծի, դէպի **ՄԵՍ** Զօրութեան առաջ, որ աղօթողին համար կենդանի է, կատարեալ և պատրաստ է օգնելու: Աղօթքը, գիտութիւն մը կամ արուեստ մը ըլլալէ աւելի, հաղորդութիւն մը և յարաբերութիւն մըն է Աստուծոյ հետ, այսինքն սրտակցութիւն մը Գերբնականին ու հասնիլ է Անհաս կարծուածին: Աղօթքը առանձնութեան մէջ դէմ յանդիման գալով իր Արարիչին, մարդ ինքնագիտակցութեան կու գայ ու կը զոջայ: Մարդ տեսնելով Իր տկարութիւններն ու սխալները, զոջումի և ինքնագիտակցութեան զգացումով ծունկի կու գայ և Աստուծոյ գութն ու ողորմածութիւնը հայցելով արդարացումի ճամբան կը գտնէ:

Զոջացող մեղաւորը կ'ըսէ. *«Տի՛ն Տէր, Զու ճամբաներդ ցոյց տուր ինձի, Զու ջախիղներդ սորվեցուր ինձի, և Ըջմարտութեանդ մէջ առաջնորդէ զիս ու սորվեցուր ինձի: Զանգի Դու ն ես իմ փրկութեանս Աստուածը, ես Զեզի կը սպասեմ ամէն օր»*-- Սաղ. ԻԵ. 4: Աղօթքը կ'արժանանայ իր լման զօրութեան, երբ աղօթող անձը հրաժարի բոլոր պիղծ մտածումներէ և անմահուր խորհուրդներէ սրբութեամբ, ներողամտութեամբ և անձնուրացութեամբ: Զաւակ մը մօրմէն կը սորվի, թէ ո՞վ է Աստուած, ո՞վ է Զրիստոս, ի՞նչ է սէրը, ի՞նչ է աղօթքը, ինչպէ՞ս պէտք է ապրիլ կեանքը:

«Աղօթքը շարժումն է այն չուանին՝ որուն ծայրը կապուած զանգը երկնքի մէջ կը հնչէ»-- **Լամբրոնացի հայրապետ**: Ազդու և արդիւնաւոր գործօն մըն էր աղօթքը Յիսուսի կեանքին մէջ: Աղօթքը զօրութեան և կեանքերը հիմնովին փոխող վառ իրականութիւն մըն էր--Յիսուսի համար աղօթքը հաղորդակցութիւն և սրտակցութիւն էր Իր Երկնաւոր Հօր հետ: Հոգեկցութիւն և ընկերակցութիւն: Հասուն հաւատացեալին աղօթքն ալ՝ *«Տո՛ւր տուր ինձի»*էն պարտ է վերածուիլ *«Ըրէ՛ զիս»* ի. նման "Անառակ Որդիի":

«Ծանիր զԲե՛զ», դիւրին չէ, ոչ ալ հաճելի: Դուն Բեզ չես տեսներ

այնպես՝ ինչպես որ ես, այլ այնպես՝ ինչպես որ կ'ուզեիր ըլլալ: Աղօթքի՛ն միջոցով պիտի տեսնես դուն զՖեզ, այնպես՝ ինչպես որ ես: Հնարաւոր չէ բացատրել աղօթքի սրբազան պահը. պէտք է զայն զգալ և ապրիլ: Ամենէն ուժգնագոյեցիկ գորութեան աղբիւրը աղօթե՛լն է: Հաւատացեալը չի՛ սարսափիր անծանօթէն՝ ինչպէս ծովու անվերջ հորիզոնները յանդուգն նաւորդին: Աշխատանքը իրեն համար վայելք մըն է, որովհետեւ պիտի ապացուցնէ իր հաւատքին և աղօթքին գորութենականութիւնը:

Առաքելական դարու հաւատացեալները, աղօթքը դարձուցին միս և արիւն, գորութիւն և կեանք:

Աղօթքի պէս գորութիւն չկայ

որովհետեւ աղօթող հաւատացեալին Տէրը կը լսէ՝ նոյնիսկ Իր փոքրիկ հաւատացեալին մանանեխածիլ աղօթքը: Աղօթքը նման ձգողականութեան, անստասանելի գորութիւն մըն է: Լուցկի մը նիւթ է ու ջօջափելի առարկայ մինչեւ որ զայն վառես, այնուհետեւ ան կրա՛կ է ուժ ու գորութիւն, նոյնպէս ալ աղօթքի բառերը կը դադրին ինձ համար գիր ու տառ ըլլալէ ու կը դառնան հոգի և ուժ, զգայնութիւն և ջարժում: Աստուած տիեզերքի կենսաբուխ Աղբիւրն է, կեանքի ստեղծագործ Զօրութիւնը, ուստի աղօթելով յարաբերինք Իր հետ:

***«Ատրդ, աղօթքով պիտի ձգտի Յաիտենականին,
պիտի հասնի Անհասին, տեսնէ Անտեսանելին,
ընդգրկէ անսահմանը և ապրի Յաիտենականը»:***

Հոկտեմբեր 3, 2003
Թորոնթօ